

**Ո՞Վ ՊԱՅԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԸ ՈՐՊԷՍ
ԱԶԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԸ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ**

1. Ներածական
2. ԱՊՐԻԼ 24-ը Ի՞նչ Կը Նշանակէ
Հայուն
3. “Ինձի Համար կեանքը Քրիստոս
է իսկ Մեռնիլը՝ Ճախ”
4. Յաջողութիւն
5. Ծնորհ

**WHO SUPPORTED THE ARMENIAN PEOPLE TO CONTINUE
AS A NATION WHICH IS CHRISTIAN**

**ԱԼՊԵՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
ԹՈՒԱԿԱՆ**

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

**Այս համեստ խորհուրդ մտածումներս
կը ձօնեմ այն բոլոր սիրելի հայրենակիցներուս,
որոնց հաւատքը և նախանձախնդրութիւնը առ
Աստուած զօրաւոր է, սակայն նախապաշարուած
անգիտութեան և ազգայնամոլութեան պատճառաւ:**

Ձունիմ յաւակնոտութիւնը թէ ես իրենցմէ աւելին գիտեմ: Իմ միակ
գիտցածս ա՛յն է, որ մեր սիրելի Փրկիչը Յիսուս Քրիստոս կու լա՛յ մեր գիրար
չսիրելուն համար:

Որպէս Հայ-Քրիստոնեաներ, բարձրացնենք մեր աչքերը ու նայի՛նք
Խաչեցեալին: Տեսնե՛նք անոր տառապանքն ու ցաւը, որուն ընդմէջէն Ան
արցունքոտ աղերսանքով կ'ըսէ Բեգի և Ինձի.

***«Ես կը խաչուիմ, որովհետեւ սիրած եմ ձեզ:
Դո՛ւք ես եղէ՛ք հանդուրժող, ու սիրեցէ՛ք զիրար»:***

Ակաէր Նորատուկեան
Ապրիլ 24, 2005
Թորոնթօ

Ա Պ Ր Ի Լ 24-Ը

Ի՞նչ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ՀԱՅՈՒՆ

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԹԷ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կը նշանակէ մարդ ըլլալ ներկայ աշխարհին վրայ: Ամերիկացի կամ Անգլիացի՞ ըլլալ կը նշանակէ: Հարուստ, անկախ և ուրիշներու վրայ տիրապետող ըլլալ կը նշանակէ: Հայ ըլլալը իմաստալից ողբերգութիւն դարձած է թէ անցալին մէջ, և թէ ներկայի տարբեր գունաւորումներով:

Ինչո՞ւ:

Նախաբրիստոնէական ջրջանին Հայերը, քաղաքականապէս եղած են հզօր և իրենց երկրին սահմանները տարածած և տիրապետած են ուրիշ ազգերու և հողերու վրայ՝ Մեծն Տիգրանի օրով: Այդ ժամանակաշրջանին, Հայերը չեն հալածուած կրօնապէս, ոչ ալ հողային կորուստներ ունեցած են:

Ա՛յն եկեղեցիով և ա՛յն հաւատով, որ Հայ ազգը կը հպարտանայ այսօր, սկսաւ մեր ազգային ողբերգութիւնն ու եղէունը: Վերոյիջեալ գրութիւնը ա՛յն Հայերուն համար է, որոնք Հայութիւնն ու Հայ-Քրիստոնէութիւնը կը ջփթեն ու նաեւ կ'ուզեն անգէ՛տ մնալ, ու նախապաշարեալ շարունակել իրենց մնացեալ կեանքը:

Յիսուս Քրիստոս և Իր աստուածայայտնիչ Աւետարանը երբ մուտք գործեց Հայոց աշխարհ, Հայը պարտաւորուեցաւ իր հոգեկան և իմացական հաւատքը ընտրել: Ժամանակաւորէն դէպի յաւերժակա՞նը, թէ շարունակել պաշտել կոյր և համր աստուածները: Քրիստոսի Հոգին երբ մուտք գործէ խմբաւորումէ մը ներս, անպայման սոյն խումբին մէջ կը սկսին բաժանումներ: Վերոյիջեալ դէպք իրողութեան համար մեր Տէրը Յիսուս ըսաւ.

«Մի՛ կարծէ՛ք թէ եկայ խաղաղութիւն հաստատելու երկրի (Առաջնայի իշխանութեան ջրջանին) վրայ. չեկայ հաստատելու խաղաղութիւն, այլ՝ սուր. քանի որ եկայ բաժնելու մարդը իր հօրմէն, և աղջիկը՝ իր մօրմէն, և հարսը՝ իր կեսուրէն: Եւ մարդուն թշնամիները իր տնեցիները պիտի ըլլան: Ով որ իր հայրը կամ մայրը ինձմէ աւելի կը սիրէ՝ արժանի չէ ինձի. ով որ իր որդին կամ դուստրը ինձմէ աւելի կը սիրէ՝ արժանի չէ ինձի: Եւ ով որ իր խաչը չ'առնէր ու իմ ետեւէս չի գար՝ արժանի չէ ինձի: Ով որ կը գտնէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն. և ով որ կը կորսնցնէ իր կեանքը ինձի համար՝ պիտի գտնէ զայն»--Մատթ. Ժ.34-39:

Յիսուս Զրիստոսի վերի խօսքերը որքա՞ն դժուարահաճ կերեւին ներկայ Զրիստոնեաներուն, որոնք սուրբ աւետարանները չեն կարդացած և անոնք որ անգէտ են իրենց եկեղեցւոյ պատմութեան և սուրբ առաքեալներու վկայութեան ու նահատակութեան: Եկե՛ք թարմացնենք մեր յիշողութիւնը ու ճանչնանք մեր արմատները:

Հայ Եկեղեցւոյ խաչապսակ նախավկայութիւն եղաւ Սանդուխտ որ դուստրն էր Սանատրուկ թագաւորին: Թաղէոս առաքեալին քարոզութեամբ քրիստոնեայ կը դառնայ և կը թողու իր աւանդական ցուրտ և անկարեկիք աստուածները: Ուրիշ բազմաթիւ քրիստոնեաներու հետ Սանդուխտ եւս շղթայակապ կը բանտարկուի: Մէկ օրուան մէջ Սանատրուկ թագաւորին հրամանով երկու հարիւր հոգի կը սպաննուին կին և այր մարդ:

Ինչպէս որ Յիսուս նախաձայնած էր ըսելով. *«եկայ բաժնելու մարդը իր հօրմէն, և աղջիկը՝ իր մօրմէն»*, արեւոյագուն Սանդուխտ կը վկայէ հօրը. ըսելով. *«Տոբ դու մոլորեցուցիչ կը կոչես, նա միայն ազատեց զիս մոլորութեան անդու նդներէն: Ան է ճշմարիտ Աստուած, Տէր ու Արարիչ երկնի և երկրի»*: Սանատրուկ թագաւորը երբ կը լսէ իր հարազատ աղջկան վկայութիւնը, կը հրամայէ որ կապեն Սանդուխտին ձեռքերը և ծեծեն զինք: Գլխատման ատեն դահիճը փոխանակ Սանդուխտը գլխատելու կը սպաննէ դահճապետը: Զինուորներէն մէկը կը վազէ ու սուրը կը մխէ Սանդուխտին սիրտը, Դեկ, 15, 41 թուականին: Թաղէոս առաքեալ լսելով ոճիրը կու գայ ու մեծաշուք պաշտամունքով կը թաղէ Ս. Սանդուխտին մարմինը:

Ի՞նչ ըրաւ կը կարծե՛ք հաւատքի, սիրոյ և փրկութեան առաքեալ՝ Ս. Թաղէոս: Միթէ, հաւատացեալ յեղափոխականներէ բանակ կազմելով Սանատրուկ թագաւորին դէմ վրէժ լուծեց: Հայ ժողովուրդին համար պարծանք է նախադաւան Բարթողիմէոսը ունենալ որպէս առաջին Լուսաւորիչը և Հայ Առաքելական Եկեղեցւոյ հիմնադիրը: Բարթողիմէոս առաջինը եղաւ աշակերտներէն՝ Յիսուսի Աստուծոյ Որդի ըլլալը յայտարարող: Բարթողիմէոս և Դաթէոս առաքեալներ հաւատքի աստղեր ցանեցին Արարատեան ժողովուրդին սրտերէն և հոգիներէն ներս: Այս երկու քաջ և հաւատարիմ վկաները Յիսուս Զրիստոսի, ո՛չ թէ վրէժ քարոզեցին իրենց թշնամիներուն հանդէպ, այլ սուրբ Բարթողիմէոս նահատակուեցաւ մորթազերծ ըլլալով...:

Յիսուս Զրիստոսի բոլոր առաքեալները, բացի Յովհաննէսէ, բազմաթիւ չարչարաններ կրելով նահատակուեցան: Նայինք թէ Պօղոս առաքեալ այս մասին ի՞նչ կը գրէ:

«Հրեաներէն հինգ անգամ քառասունէն մէկ պակաս ծեծ կերայ. երե՛ք անգամ ձաղկուեցայ. մէկ անգամ քարկոծուեցայ. երե՛ք անգամ նաւաքնութեան քունուեցայ. մէկ ցերեկ և մէկ գիշեր ծովու անդու նդներու ն վրայ տառապեցայ: Ընամբողջութիւ ններ՝ ջատ անգամ. վտանգներ գետերէն

*վտանգներ՝ աւազակներէն. վտանգներ՝ ազգակիցներէն.
 վտանգներ՝ հեթանոսներէն. վտանգներ՝ Բաղաճի մէջ. վտանգներ՝ անապատի մէջ. վտանգներ՝ ծովու վրայ. վտանգներ՝ սուտ եղբայրներէ. Աշխատանքներու, յոգնութիւններու և տխրութիւններու մէջ, ջա՛տ անգամներ. անօթութեան մէջ և ծայրաւի, ծովապահութեան մէջ, ջա՛տ անգամներ. ինչպէս նաեւ ցուրտի մէջ ու մերկութեան»--Բ Կորն. ԺԱ.24-27:*

Կարդանք նաեւ ճանչնալու համար թէ մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս որբա՞ն չարչարուեցաւ, որպէսզի փնտռէ մեզի նման կորսուած մեղաւորները և վերադարձնէ զանոնք յաւիտենական կեանքի:

«Այնուհետեւ Յիսուս սկսաւ յտակերէն յայտնել աշակերտներու և թէ պէտք է որ Ինձ էրուսաղէ՛մ եղթայ, ջատ չարչարանքներ կրէ Բանանայապետներէն, դպիրներէն, ժողովուրդի ծերերէն և սպանուի ու երբորդ օրը յարութիւն առնէ: Եւ Պետրոս մէկ կողմ տանելով զԱյն՝ սկսաւ վիճիլ Անոր հետ ու ըսել. «Քա՛ւ լիցի Բեզ, Տէ՛ր, այդ բանը Բեզի չի պատահիր»: Եւ Ան դառնալով Պետրոսին՝ ըսաւ. «Ետի՛ն գնա, Աստանա՛յ, դու ն գայթակրութիւն ես ինձի համար, որովհետեւ Բու մտածումներդ Աստուծոյ մտածումները չեն, այլ՝ մարդոց»--Մատթ. ԺԶ.21-23:

Հայ նահատակ **Սալյաթ Նովա** --(1712-1795): Աջուղական բանաստեղծութեան իշխանը: Ան ամենէն աւելի հոգեկան կուրուիթենէ կը վախնար: Աջուղը ներքին սուսայտանքի մէջ էր, Իսլամները կը պահանջեն անկէ որ ուրանա՛յ Բրիստոնէական հաւատքը, իսկ աջուղը հերոսաբար կ'ըսէ անոնց.

«Ժամէն դուրս չեմ գոր, Յիսուսէն չեմ դառնար»:

1795, Թիֆլիսի եկեղեցիին դրան առջեւ Մահմէտ Խանի զինուորները զինք կ'սպաննեն:

Արութին Աւյադեան, 1712-1801, գրական կեղծ անունով՝ **Սալյաթ Նովա**, որ իբրեւ անգուգական նուագող, իբրեւ Բերթող երգիչ և որպէս Անդրկովկասի երեք ժողովուրդներու լեզուներով ստեղծագործող երաժիշտ՝ ժողովրդական-գուսանական արուեստը հասցուցած էր համաշխարհային բանաստեղծութեան բարձրագոյն աստիճանին:

1. Փառաքանած է արդարութիւնը և ազնուութիւնը»
2. դատապարտած է կեղծիքն ու Բժնանքը:
3. դաւեր նիւթած են իր դէմ 1759-ին և հեռացած է պալատէն:

Այսպիսի Լուսնի ամեննալ անկախ հոգեկան կուրութեանէ կը վախնայ: Այսօր կրնանք ունենալ աշուղներ, մտաւորականներ և քերթողներ, սակայն քանի՞ հատ հերոս Բրիստոնեաներ կան Հայ եկեղեցիներէն ներս: Այսպիսի՛ հաւատացեալներն էին որ պահեցին Հայր՝ Բրիստոնեայ ու նաեւ Հայ:

Արարատեան աշխարհի Հայ Բրիստոնեաները, հպարտ են որ ունին Բարթողիմէոս և Դաթէոս առաքեալները որպէս լուսաւորիչները Հայաստան աշխարհի: Այսպիսի հիմնադիրներ ունենալ չքաւեր այսօր: Ներկայ առաջնորդներէն քանի՞ հատը, նման Յիսուսի աշակերտներէն ընտրած են նեղութիւնը ու չարչարանքը որպէս զէնք վկայութեան և քարոզութեան պայքարի ոյժ:

Արքայական հանդերձանքներով քեմ քարձրանալ կամ խորան ելլել, ներկայ եկեղեցականին իշխանութիւն և իրաւունք չի տար ըլլալ առաքելական յաջորդ մը: Ի՞նչ քարոզեցին, ի՞նչ յայտարարեցին և ի՞նչ պահանջեցին առաքելական յաջորդութեամբ և ձեռնադրութեամբ եկեղեցականները այսօր Ապրիլ 24-ի պատմական օրը: Պահա՞նջք, առնելի՞ք և բողո՞ք ներկայացուցին Թուրքիան, թէ ներում ու եղբայրական ձեռնսեղմում:

Այսօրուան քահանաներուն, վարդապետներուն և պատուելիներուն քարոզութեան ի՞նչ պիտի ըսէ արդեօք Յիսուս Բրիստոս.

«Բու մտածումներդ Աստուծոյ մտածումները չե՞ն»,

Թէ

«Արածէ՛ Իմ ոչխարներս»:

Հայ ազգը գաղթական չեղաւ որովհետեւ Հա՛յ էր: Թուրքերը Հայ ազգը Տէր էլ Զօրի անապատները չփշեցին, որպէսզի անոնք անօթի և ծառա մեռնին: Անոնք ախորեցի՞ն Հայերը ու ջանացին աշխարհէ բնաջնջել զանոնք, որովհետեւ Հայերը **Բրիստոնեա՛յ էին**: Որպէս ապացոյց, բոլոր այն հայերը որոնք ուրացան Յիսուս Բրիստոսը և իսլամացան, մնացին տէր իրենց կալուածներուն, ընտանիքներուն և կեանքին:

Աստուծոյ Որդին եկաւ աշխարհ ո՛չ որպէս Զբօսաշրջիկ մը, այլ որպէս գաղտնի պատգամաւոր, հաստատելու համար *հինգերորդ զօրասիւն*՝ մը, որ ան (եկեղեցին) ջարունակէ Աստուծոյ գործունէութիւնը Մատանայէն առեւանգուած աշխարհին մէջ: Մոյն պատճառաւ Ան ըսաւ իր աշակերտներուն.

**«Ահա ասիկ էս ձեզ կը դրկեմ իբրեւ ոչխարներ՝
գալլերու մէջ»--Մատթ. Ժ.16:**

**«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք,
սակայն Բաջալերու եղէ՛ք, որովհետեւ էս յողթեցի՛
աշխարհին»:--Յով. ԺԶ.33:**

Բոլոր այն կղերականները, որոնք լման չեն կրցած հասկնալ Յիսուսի Աւետարանը և չեն ճանչցած Աստուած Ճշմարիտը, անո՛նք եղած են Հայ բանաստեղծներու և բազմազան մտաւորականներու գայթակղութեան պատճառ, որոնք հեռացած են Աստուծմէ:

Յիսուս Իր Եկեղեցին չէ՛ ընտրած և կանչած դիւրին գործի մը համար: Ան սկիզբէն ըսաւ. **«Ձեզ կը դրկեմ որպէս ոչխարներ գայլերու մէջ»:** Ձեզմէ ոմանք պիտի յօշոտուին, խածնուին, անարգուին, ծաղրուին, սակայն ձեր պարտականութիւնն է համոզել առեւանգուած եղբայր և քոյր ոչխարները» ու վերադարձնել զանոնք Ինձի, որովհետեւ ես եմ **Բարի Հովիւր** ոչխարներուն: Եկեղեցիին խիղճի պարտքը և պարտականութիւնը մարդորսորդութիւնն է: Յետո՛յ կու գան վարչականը, ընկերայինը և քաղաքականը:

Ի՞նչ է տարբերութիւնը **Ազգասիրութեան և Հայրենասիրութեան:** Հայրենասիրութիւնը իր պատմական բնաշխարհին մէջ, իր պապենական հողին վրայ ազատ ու ինքնիշխան կեանքով ապրելու երազն է, որ մեր ժողովուրդին հետ քալած է հազարամեակներու իր պատմութեան ամբողջ տեւողութեան ջրջանին: «Հայի սրտում չի հանգում հայրենասիրութեան կայծը, բաւական է փչել նրա վրայ և ահա նա կը բորբոքուի, կը բոցավառի»: Նոյնն է նաեւ հայուն հաւատքը: *Հոգեկան ջուրն է և հոգեկան խմաստ կը պակսի* --**ՐՓՖԻ:** Մենք ոչ միայն մեր ծնողներու զաւակներն ենք, այլ՝ նաեւ հայրենիքին: Այնպէս հայրենիքը կրնայ բնագոյ մը եղած ըլլալ. բայց մարդկային հոգիի զարգացման հետ, ան դարձած է զօրեղ գիտակցութիւն: Ազգութեան գաղափարը այն առանցքն է որուն շուրջ կը դառնայ պատմութեան անիւր:

Հին ազգերու մէջ առաքինութիւն էր ոչ միայն սիրել բարեկամը, այլ՝ եւ թշնամին ոչնչացնել: Թշնամիի արիւն խմել շատ ազգերու մէջ պատմական իրողութիւն է: Նոյնիսկ Սաղմոսներու մէջ թշնամական անեծֆներ կան դէպի հակառակորդները (Սաղմ ՃԹ.Ե-20: Բրիստոնէութիւնը գթութեան, կարեկցութեան և սիրո՛յ կրօնքն է: Բրիստոնէութիւնը խորտակած է հին աշխարհի կուրք "եսական" ամբողջները: Բրիստոնէութիւնը հայրենասիրութեան գաղափարը չի ոչնչացուց, այլ՝ **սրբագործեց:**

Հայրենասիրութիւնը պէտք է շփոթել **Ազգասիրութեան** հետ: Ազգասիրութիւնը կ'ենթադրէ սէր և զոհաբերում՝ ազգի՛ն հանդէպ, ժողովուրդի՛ն հանդէպ, իր ազգակցի՛ն հանդէպ. մինչդէռ *հայրենասիրութեան* մէջ այդ սէրն ու զոհաբերումը կ'ուղղուի *Հայրենիքին*, որ ապաստանարանն է, ապահով տունը: Թրքահայերու մօտ ջեջտուած է ազգա- *սիրութիւնը*, մինչդէռ Ռուսահայերու մօտ՝ *հայրենասիրութիւնը*: Թրքահայը, սեփական հայրենիք չունեցաւ *վեց հարիւր տարի*: Եւ հայրենիքի գաղափարն իսկ մնաց իրեն համար ոչ իրական: Պապենական աւանդութիւններուն պահպանութեամբ անաղարտ պահեց ազգային դիմագիծը: Այսպէս, այլադաւան Թուրքէն հեռու ապրելու իր ճիգին մէջ, ամփոփուեցաւ և համախմբուեցաւ Մայր Եկեղեցւոյ

ծոցին մէջ և սերտացաւ ու զօրացաւ ազգային կեանքը:

Օտար երկիր ծնող մէկու մը համար, հայրենասիրութիւնը հոգիին աչքերով տեսանելի է: Զրիստոէութիւնը մաքրեց հայրենասիրութիւնը "եսական" և բարբարոսական տարրերէ: Լոկ ճաշերով ու խնճոյֆներով միայն գիտենք ցուցաբերել մեր հայրենասիրութիւնը...: Ստորնացման վիճակէն չայլ բարձրացնելու համար անհրաժեշտ էր հզօր կամք մը և խանդավառ ազգասիրութիւն մը: Մի միայն նիւթապաշտ անհատները, որ ամէն կրօնք կորսնցուցած են, չեն զգար ազգային հողին հրապոյրը և զուրկ կը մնան ազգասիրութենէ: Հայրենիքը կը քանդուի ու կ'անհետանայ, երբ անոր մէջ անաստուածութիւնը ըլլայ տիրականը:

Հայրենիքը ոչ միայն հողն է ու յուշարձանները, ոչ միայն լեզուն է, մջակոյթը ու անցեալ պատմութեան դրուագները, Հայուն հայրենիքը **կրօնքն է ու Զրիստոսի հաւատա՛լը:**

Միտքս պարզելու համար կ'ուզեմ Վասակ մարգպանը օրինակ բերել:

Վասակ, Հայաստանի մարգպանն էր Միւնիքի քաջ իշխան. հանճարեղ և աստուածային իմաստութեան շնորհով օժտուած անձ մը, որ դժբախտաբար, 451 թուականին ազատագրական պատերազմին, տխուր դէր կատարելով, դաւաճան և ուրացող հուչակուեցաւ: Ինչո՞ւ, որովհետեւ Վասակ հայրենասէր էր: Իրեն համար տարբերութիւն չէր ըներ թէ ի՞նչ հաւատքի Հայեր կը բնակին Հայաստան հողի վրայ, որքան ժամանակ որ այդ ժողովուրդը Հայ է:

«Վասակ Միւնի ուրացաւ այն աւազանը որ յղացած էր զինք:

Անարգեց այն պատուական Անյամինը, որով սրբուած էր և ոտնահարեց այն կենդանի Անյա նր որով մեղքերու թողութիւն ստացած էր: Զնչեց իր որդեգրութեան գիրը և իր ձեռքով խորտակեց մատանիին հատտատած կնիքը, դուրս ելաւ երանելիներու թիւէն և ջատեղը ապստամբեցուց իրեն հետ»:

«Վասակ իր ձեռքն առաւ Աստուան իբրեւ վահան, հազաւ զայն որպէս զրահ, դարձաւ անոր կամքին կատարեալ զինուորը»-- Եղիշէ:

«Այդ՝ դուրս եկաւ դանձապետը և ջտապով մօտեցաւ, քոչոր մեծամեծներուն և առջեւ, հանեց Վասակի արքունիքէն ստացած ջֆանջանները և անոր հագցուց մահապարտի զգեստը: Կապեցին անոր ձեռքերն ու ոտները ու ձիու վրայ նստեցնելով տարին և յանձնեցին այն զնդանը, ուր կը գտնուէին քոչոր մահապարտները»--Եղիշէ:

Հրեայ ազգն ալ երբ իր *կրօնակա՛ն ազգասիրութիւնը* դաւաճանեց, այսինքն կրապաշտ հայրենասիրութեան՝

1. Հողային տարածութեան:
2. Դրամապաշտութեան:
3. Փառամոլութեան:
4. Դիւրակեցութեան:
5. Տաճարի՝ նիւթի՝ երկրպագութեան:

6. Դարձաւ Սատանայի երկրպագուն:

Ուստի,

Հրեան կորսնցուց իր հայրենիքը, տաճարը և աբսորուեցաւ իր երկրէն ու դարձաւ անհայրենիք ու գերին իր ասած հեթանոսներուն: Հրեան գոյատեւեց երկու հազար տարի ո՛չ թէ իր հայրենիքով, այլ ազգասիրութեամբ և կրօնով:

Անցեալի անհամար Հայերը, որոնք ի սէր իրենց հայրենասիրութեան ուրացան իրենց Բրիստոնէական հաւատքը, փրկելու համար իրենց ընտանիքն ու հայրենիքը, ո՛չ թէ միայն չկրօցին ջարուհակել որպէս Հայ Իսլամներ, այլ կորսուեցան ու անյայտացան Հայութենէ: Իսկ այն Հայերը, որոնք հալածուեցան ի սէր իրենց Փրկչին Յիսուս Բրիստոսի ու նահատակուեցան Բրիստոնէական ազգասիրութեան համար, թէ՛ իրենք կը գոյատեւեն ցարդ ու նաեւ գոյատեւութիւն տուին էջմիածին եկեղեցւոյ ու անոր լուսապայծառ Խաչեցեալին:

Զկա՛յ Հայութիւն առանց Բրիստոնէական հաւատքի ու Հայը չկրնար գոյատեւել առանց խաչի տառապանիքի: Հայը պիտի բալէ՛ հետեւելով Խաչեցեալի ոտնահետքերուն ուրանալով Սատանային խաթ հրապուրները: Վարդանանք ***իրենց կեանքը*** իբրեւ պատարագ զոհաբերեցին, որպէսզի Հայ Հաւատն ու Հայ ազգը ապրին: Անոնք աներկիւղ բալեցին Գողգոթայի ճամբայէն ու մեռելոց յարութեան Արջալոյսը ողջունեցին: Բարբարոս ազգեր, հեթանոս կամ կռապաշտ, դարերու ընթացքին թաւալած են մեր վրայէն մրրիկներու նման, և անցած՝ մրրիկներո՛ւ նման, բայց մենք ոտքի ենք տակաւին:

15 Դարեր տեւող մեր ընդարձակ մարտիրոսութիւնը ոչ թէ նուաստացման, սուգի կամ լացի պարտի մղե՛լ մեզ, այլ հպարտանքի, փառքի՛ և խնդրութեան, որովհետեւ.

***«Եթէ եղաւ ազգ մը՝ որ խաչեց Յիսուս Փրկիչը,
եղաւ նաեւ ա՛զգ մը, որ խաչուեցաւ ի սէր այդ Փրկչին»:***

***Երանի՛ թէ համա՛յն Հայ ազգը գիտնար իր
կոչումը և թէ ո՛վ է զինք Կանչողը:***

Մայիս 5, 2003,

Թորոնթօ

“ԻՆՇԻ ՀԱՄԱՐ ԿԵԱՆՔԸ ՔՐԻՍՏՈՍ Է, ԻՍԿ ՄԵՌՆԻԼԸ՝ ՇԱՀ”

Պօղոս առաքելի « Ինժի համար *կեանքը* Զրիստոս է» վկայութեան "կեանք" բառը, կը նշանակէ մարդկային ապրելակերպ, գոյութիւն եռանդ, վարք, կենցաղ և ոգեպահիկ: Ուստի մարդ արարածին ամէնաարժեքաւոր և իմաստալից ձեռք բերածը աշխատանքով կամ դրամով, այսինքն իր սեփականութիւնը՝ շարժական կամ անշարժ ստացուածքը, իր ապրումը, գոյութիւնն ու էութիւնն է: Ուստի մարդ արարած տիեզերքի ամէնաարդիւնաւոր և վաստակաւոր էակն է: Ուրեմն, մարդ արարած ինչի՞ և որո՞ւն կրնար յատկացնել իր գոյութիւնը և իր ապրումը որ կարենայ լաւագոյնս արդիւնաւորել զայն: Ոմանք իրենց կեանքին արժեքը չգիտնալով կը մսխեն իրենց կեանքը անառակութեամբ, ուրիշներ հարստութիւն դիզելով, և շատ մը ուրիշներ ալ ծափահարուելու ու փառաւորուելու համար:

Վերոյիշեալներուն մէջ կար Սաւղոս կոչուած Փարիսեցի մը Գամաղիէ վարդապետի աջակերտը: Մովսէսի Օրէնքին մէջ դաստիարակուած այս կրօնամոլը նուիրած էր իր կեանքը յաղթահարելու և նուաճելու Յիսուսի եկեղեցին՝ Զրիստոսի հաւատացողները: Սաւղոս իր ծայրայեղ Մովսիսական կրօնապաշտութեան պատճառաւ գնաց Բահանայապետին մոտ և նամակներ ինդրեց անկէ Դամասկոսի մէջ գտնուող ժողովարաններուն ուղղուած, որպէսզի, եթէ այդ ճամբուն (Յիսուսի) հետեւող ոեւէ մէկը գտնելու ըլլայ, այր թէ կին, կապած Երուսաղէմ բերէ զանոնք ու բանտարկէ:

Ծայրայեղ կրօնամոլ Սաւղոս երբ կ'երթար ու Դամասկոսի մօտեցաւ, յանկարծակի իր շուրջը երկինքէն լոյս մը փայլատակեց: Եւ գետին իյնալով՝ լսեց ձայն մը որ կ'ըսէր իրեն. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ կը հալածես Զիս»: Եւ ան ըսաւ. «Ո՞վ ես, Տէ՛ր»: Եւ Զայնը ըսաւ. «Ես Յիսուսն եմ՝ զոր դուն կը հալածես»: Սաւղոս եկած էր Տարսուսէն Երուսաղէմ, ուսանելու Մովսէսի Օրէնքը և ճշմարիտ ճամբան: Ուխտած էր ի գին ամէն բանի վերջ տալ Գալիլեացիներու աղանդին (Զրիստոնէութեան): Կասկածելիները կը տաներ Տաճար խարազանուելու և բանտարկելու: Յիսուսի հետեւորդներուն համար, մահուան հրեջշակն էր ան: Յունախօս Հրեաները խոյս տուած ու փախած էին մինչեւ Դամասկոս ու Անտիոք: Պօղոսի դարձը ամենագղեցիկ ներգործութիւններէն մէկը մնաց Զրիստոնէական երկհազարամեայ կեանքին մէջ:

Յիսուսի լուսաբորբ յայտնութիւնէն ու հեզահամբոյր հարցումէն յետոյ, Պօղոս ողջ էութեամբ ցնցուած, անոր բաց աչքերը փակուեցան արտաքին աշխարհի: Խորահայեաց նայուածքով անոնք սեւեռած էին իր ներքին էութեանը վրան: Նոր մարդն էր որ իր մէջ կը յայտնաբերուէր: Սաւղոս՝ դարձաւ Պօղոս, հալածիչը՝ տարածիչ, ատելութիւնը՝ սէր և իշխանութիւնը՝

Ժառայութիւն: Յարուցեալ Փրկիչը *չու տաժնու նը* ներգործութեամբ հանդիպած էր անոր...: Ուժգին ներգոր ազդեցութեամբ, Յիսուս էափոխեց Պօղոսը՝ Պօղոսի: Կարդա՛նք Բրիստոսի յուսադրիչ խօսքերը Պօղոսին. «Բեզի երեւցայ՝ որպէսզի քեզ ինձի օգնական դարձնեմ և վկայ՝ տեսածներուդ և դեռ տեսնելիքներուդ՝ որոնցմով պիտի երեւիմ քեզի»--**Գործք ԻԶ.16:**

Յիսուսի երեւումը Իր ընտրած առաքեալներուն, զանոնք կուսակրօն վանական մենակեցութեան համար չէ՛, այլ՝ *առաքել ակա՛ն* ֆարոգչութեան: Պօղոս Դամասկոսի ճամբուն վրայ երբ տեսաւ լուսեղէն Յիսուս Բրիստոսը, ու դարձի եկաւ, անմիջապէս ֆարոգիչ առաքեալ մը չեղաւ: Ան, նախ զնաց Արաբիոյ մէկ անապատը, ջերմեռանդօրէն աղօթելու Անոր որ նախապէս կը հալածէր: Մէկ և երկու տարի անապատի առանձնութեան մէջ ան ունեցաւ բարեպաշտական մտածումներ, խորհրդածութիւններ և տեսիլքներ: Կուզեմ սոյն աղօթող Պօղոսի յայտնութիւններէն մին կարդալ.

«Կուզեմ խօսիլ Տիրոջ տեսիլքներու ն և յայտնութիւններու ն մասին: Գիտեմ մարդ մը ի Բրիստոս, որ տասնչորս տարի առաջ (թէ մարմնով էր՝ չեմ գիտեր, թէ առանց մարմնի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ) յափշտակուեցաւ մինչեւ երրորդ երկնիմ: Եւ գիտեմ այդպիսի մարդ մը (թէ մարմնով էր կամ առանց մարմնի, չեմ գիտեր, Աստուած գիտէ), որ յափշտակուեցաւ մինչեւ դրայստ և լսեց անպատմելի խօսքեր՝ զոր մարդ չի կրնար խօսիլ» --Բ կորն. ԺԲ.2-4--Պօղոս առաքեալ:

Պօղոս և մնացեալ բոլոր առաքեալներն ու գործօ՛ն աշակերտները Յիսուսի, իրենց մտածումն ու երկարատեւ աղօթքները կատարելու համար չթողուցին աշխարհը ու չֆաջուեցան անապատ աղօթելու ու ճգնելու, այլ անոնք շարունակեցին հետեւիլ իրենց Յիսուս Վարդապետին ոտնահետքերուն ու դարձան շրջիկ ուսուցանող ֆարոգիչներ: Ճգնաւորութիւնը սկսաւ Հնդկաստանի մէջ Պուտտհա կրօնապետի մը միջոցաւ Բրիստոսէ 600 տարիներ առաջ:

Պուտտհա իր ժամանակակիցները յորդորեց աղֆատ ըլլալ որպէսզի ազատ ըլլան նուիրուելու ճշմարտութեան: Ան սաստեց իր աշակերտները, որոնք ՄահաՎիրայի (հնդիկ կրօնաւոր) կը վերագրէին գերբնական զօրութիւններ: «Հոգեկան և մարմնական զանազան պահանջները արհամարհելով և զանոնք խեղթելով մարդ կը հասնի *«ի նմ՝ նախատարել ազդործու մի»*-ըսած է Պուտտհա: Սուկրատ ընդնջմարել տուաւ՝ հոգիին մատչելի լուսաւոր բարձունքները, շրջեց բարոյական օրէնքները իր ժամանակին: Մովսէս դատապարտեց մեղքը և յանցանքը: Պուտտհա զանազանեց չարն ու բարին. բայց թէ՛ Սուկրատի, թէ՛ Մովսէսի և թէ՛ Պուտտհայի կը պակսի *բացարձակ* ոգեկանութիւնը, որով համակուած է Խօսքը Յիսուսի, որ գործ է միանգամայն:

Կուսակրօնութիւնը տարածուած է պուտտայականութեան և Բրիստոնեութեան մէջ: Պուտտայականութեան մէջ չկայ Աստուած, չկայ գերբնական

ուժ, չկայ արարիչ, չկայ արտափին փրկիչի մը գաղափարը: Յետագային Պուտտայականներ, իրենք աստուածացուցին Պուտտհան: Աշոֆա Հնդկաստանի Կայսրը 273-232-ին Պուտտհայի տուաւ պետական կրօնի նշանակութիւն և նպաստած եղաւ անոր տարածման: Պուտտայականութիւնը առաջին դարուն սկսած է թափանցել Չինաստան, չորրորդ ու վեցերորդ դարուն Գորիա և Ճաբոն:

Յիսուս Բրիստոսի անձին ու Բարոզութեան մէջ աղփատութեան սերը ճգնաւորական ցուցամոլութեան ամբարտաւան զգեստ մը չէ: Հինգերորդ դարը Բրիստոնեայ աստուածաբաններու և ճգնաւորներու դարը եղաւ: Մթ. Մաշտոց ճգնաւոր մը չէր: Ան աջակերտ եղած ըլլալ կը թուի "հսկողներու" հիմնադիր Աղեֆասնոր Ակումիտ ճգնաւորին, որ Բրիստոսի դարձուցած էր Մաշտոցի յարգանքին և երախտագիտութեան առարկայ Ռաբուլաս մեծ եպիսկոպոսը:

Բրիստոնէութեան մէջ ճգնաւորութիւնը սկսած է երրորդ դարուն վերջաւորութեան եգիպտոսի մէջ: Հոգեզգօն Բրիստոնեաներ, տեսնելով չորրորդ դարու անսուրբ խառնուրդը չեթանոսութեան և Բրիստոնէութեան, ընդվզեցան եկեղեցականներէն: Եկեղեցիներու մէջ մնալով, կարծեցին թէ, չեն կրնար անաղարտ պահել իրենք զիրենք, ոչ ալ եկեղեցական ընկերութիւնը բարեկարգել. այդ պիտի նշանակէր հոսանքն ի վե՛ր թիավարել: Ուստի միակ տրամաբանական ելքը գտան եկեղեցիէն հեռանալ և առանձինն ապրիլ: Այս որոշումը ո՛չ Բրիստոնեայել է ու ո՛չ ալ Բրիստոսահաճոյ: Մարմինը ճնշելու և իր ցանկութիւնները մեռցնելու այս գաղափարը Աետարանի պատգամը չէ՛, այլ՝ Պուտտայական: Ծեշտ կը դրուի նաեւ հաւաքական կենցաղին, այսինքն միաբանական ու վանական կեանքին վրայ՝ հակադրուած մենակեաց ճգնաւորութեան:

Բարոյական անկումի այդ ճախճախուտին մէջ մարդիկ կը տեսնէին վտանգը իրենց հաւաքական կեանքին: Եւ իբր ա՛յդ օրերու եկեղեցիներու հակազդեցութիւն, ճգնաւորական յարացոյցին փայլովը գրաւուած, անոնք կը փախչէին աղտոտ ու անբարոյականի այդ տիղմերէն: Այս փախչողները ճգնաւորներն էին, մեծ ախոյեանները սրբութեան ու մանաւանդ լրջութեան: Մէկ կողմէն մտաւորական մոլորութեան (եկեղեցական Վարդապետութեան) և միւս կողմէն բարոյական սնանկութեան դէմ պայքարողներու դարն է Հինգերորդ Դարը:

Բրիստոնէական ճգնաւորութեան հիմնադիրը եղաւ Պօղոս Եգիպտացին, որ թողուց աշխարհը գնաց առանձնացաւ հարաւային Եգիպտոսի Թէբայիթի անապատը: Ս. Անտոն ճգնաւորի աջակերտ Պաֆոմեոսը եղաւ հիմնադիրը վանականութեան: Ժողվեց 300 մենակեացներ նեղոսի մէկ կղզիին մէջ՝ իբրեւ առաջին վանքը կամ մենաստանը: Վանականութեան գլխաւոր պայմանը *կու տակրօնու թիւ նն* էր: Պաֆոմեոս հիմնեց նաեւ իր Բրոջ և ուրիշ կիներու առաջին վանքը կամ կուսանոցը, «**ՆՈՒՆ**» անունով, որ Ղպտերէն "մաֆուր" կը նշանակէ

Ճգնողական այս շարժումը ի վերջոյ անցաւ Արեւմուտք, ուր գտաւ ան իր գերագոյն կատարելութիւնը՝ ստեղծումով Արեւմտեան վանական դրութեան՝ սկսուած Բենեդիկտոսով (480-550): Աճելով և աւելի կատարելագործուելով Ֆրանչիսկեան, Տոմինիկեան, Գաբուչինեան, Յիսուսեան, Թրաքիստ և այլ բազմաթիւ մեծ ու փոքր միաբանական կարգերով, որոնք ոչ միայն կազմեցին Արեւմտեան եկեղեցիին փառքը և զօրութիւնը այլ նաեւ ծառայեցին համայն եկեղեցապաշտութեան դատին:

Իրական ճգնաւորութիւնը վաղ միջնադարին մահացած էր արդէն, երբ մարդիկ աւելի նախապատուութիւն տուին աշխարհէն և անոր պատասխանատուութիւններէն փախչելու ցանկութեան, քան հոգեկան կատարելութեան իտէալին. երբ անհոգ ու հանդարտ ապրի՛լը կարգախօս դարձաւ, քան պայքարիլը չարի ոյժերուն և մարմնական ցանկութիւններուն դէմ: Ճգնաւորները պայքարեցան հաւատացեալ ազգին անհաւատութեան դէմ, բարոյական ազգին անբարոյութեան դէմ, գիրով գիրքով, խօսքով, գործով, գրականութեամբ, Աստուածաշունչով, Բարոզութեամբ, ճրգնութեամբ և հալածուելով:

Վանքերը դարձան կամ մշակութային հաստատութիւններ, որուն համար բացարձակ անհրաժեշտութիւն չկայ կուսակրօնութեան, այսինքն կեանքի ամբողջական ողջակիզման, քանի որ աշխարհիկ մարդն ալ նոյն պայմաններու տակ կրնայ ընել նոյն գործը, և կամ՝ դարձած են ապաստարաններ հոգիէ պարպուած ծոյլ մարդոց, որոնք լոկ պահպանութիւնը կ'ընեն վանական այդ հաստատութիւններուն ու կ'ապրին դարերու դիզած ժառանգութեան և հարստութեան վրայ:

Ոնոփրիոս ճգնաւորի փառամոլութիւնը, ան ըսած է.

«Այսօր կը վերջանան կեանքիս օրերը. Թաղէ՛ մարմինս և գնա պատմէ՛ եղբայրներուս, որ եթէ մէկը խունկ ծխէ իմ յիշատակիս կամ նուէր տայ կամ աղբատներ կերակրէ իմ անունովս, ես ալ պիտի յիշեմ զայն Քրիստոսի առջեւ: Աստուծմէ իմ վերջին խնդրանքս այս է. ով որ իր աղօթքին մէջ յիշէ նաեւ զիս, թող յիշուի և մեծ վարձք ստանայ Աստուծմէ»:

Միմէոն Միւնակեաց--390-թ

Այս մարդը աշխարհի մէջ ապրելով հանդերձ՝ աշխարհի հետ իր շփումը խզելու դիտաւորութեամբ յղացաւ գաղափարը սիւնի մը վրայ (60 կանգուն բարձրութեամբ) ապրելու՝ տարիներով: Միթէ ցուցամոլութիւն չէ՞ այս: Աստուծոյ ուզածը, ո՛չ թէ մեր աշխարհէ բաժնուիլն է, այլ Անոր ծառայել է նման Աննա մարգարէութիւնի--Ղուկ. Բ.25-36: Կատարելութեան մղումը մարդուն մէջ ծնունդ կ'առնէ ինքնավերլուծութեամբ ու ինքնաճանաչումով, նման "Անտակ "Որդիին": Քրիստոնէական կեանքը ճգնաւորութիւնը **9է՛**, այլ Աստուծոյ տուած տաղանդները գործածութեան դնել:

Անիի մահմետական ամիրայի Փալան որդին, որ Գրիգոր վարդապետի մը միջոցաւ Բրիստոնէութիւնը ընդունած էր և 15 տարի ճգնաւորական կեանք վարած, թաղուած է Դրազարկի վանքին մէջ: Կեանքը, անապատին մէջ, նո՛յնն էր յաւէտ, լծացած ու միապաղաղ: Անապատը կարծես բոլոր հաշիւները աշխարհին հետ փակած ու յաւէտ մեկուսացած էր անկիւն մը:

Յիսուսի առաքելութիւնը քարոզե՛լ էր Աստուծոյ պատգամը՝ յայտնութիւնը առ մարդ արարածին: Յիսուս պատգամեց աշխարհի, թէ մարդուն պարտականութիւնը ի՛նչ է: Հասկնալի լեզուով Յիսուս ըսաւ մեզի.

«Ես եմ ճշմարիտ Որթատունկը: Եւ իմ Հայրս Մշակ է: Ամէն ճիւղ, որ իմ վրաս է (մկրտուած է ու հաւատացեալ) և պտուղ չի բերեր՝ ան կը կտրէ զայն. իսկ այն ամէնը, որ պտուղ կը բերէ՝ կը յօտէ զայն, որպէսզի աւելի եւս պտղաբեր ըլլայ»--Յով. ԺԵ.1-2:

Անիի մահմետական ամիրայի Փալան որդին, մկրտուեցաւ և դարձաւ հաւատացող մը Յիսուս Զրիստոսի: Ան եւս դարձաւ ճիւղ մը Յիսուս Զրիստոս Որթատունկին վրայ: Ի՞նչ ըրած եղաւ Իսլամ ամիրայի Փալան որդին: Վերջին վկայութիւնը արձանագրուած է, ու կ'ըսէ հետեւեալը.

**«15 տարի ճգնաւորական կեանք վարած,
թաղուած է Դրազարկի վանքին մէջ:**

Մէկ բառ անգամ չէ արձանագրուած թէ ի՞նչ ըրած է Փալան նորահաւատը վկայելու Յիսուսը իր Իսլամ եղբայրներուն: Յիսուսէ բժշկուած բոլոր հիւանդներուն, Յիսուս պատուիրեց ըսելով.

1 «Զացե՛ք և պատմեցե՛ք ձեր ընտանիքին, ինչ որ Տէրը ըրաւ ձեզի»:

2. «Գնա դուն ալ այդպէս ըրէ»:

Անպտուղ թզենին և անպտուղ ճիւղը, Մշակը կը կտրէ ու կրակը կը ձգէ ըսաւ Յիսուս Զրիստոս: Տասը, հինգ և մէկ տաղանդ ստացողները Յիսուս կանչեց հաշուետուութեան: Ան որ մէկ տաղանդ ստացած էր, եկաւ առանց արդիւնաբերութեան և համարձակեցաւ գրաբարտել իր Տէրը, ըսելով. «Տէ՛ր, գիտէի որ դուն խիստ մարդ ես. կը հնձես ինչ որ չես ցանած, և կը հաւաքես այնտեղէն ուր չես սփռած. վախցայ, գացի և պահեցի քու քանակարդ հողին մէջ արդ, ահաւասիկ քու կը՝ քեզի»:

Ճգնաւորութիւն ընող հաւատացեալի մը ըրածն ալ մէկ քանակար առնողին ըրածն է: Անջո՛ւշտ ճգնաւորներուն մէջ ալ գտնուեցան ոմանք, որոնք եկան քաղաք ու քարոզեցին, սակայն բացարութիւններ էին անոնք:

Յիսուսի բոլոր առաքեալներն ալ նման Պօղոսի, դարձան առաքեալներ, քարոզիչներ և ուսուցանողներ, որոնք վկայեցի՛ն ու շարունակեցին իրենց Վարդապետին պատգամը համա՛յն աշխարհի, ո՛չ թէ թաղեցին հողի մէջ ու

դարձան անապատական կուսակրօն վանականներ:

Յերոնիմոսի լատիներէն թարգմանութիւններէն մինչեւ Վերածնունդի նորագոյն փորձերը, երկարող տասնը և մէկ դարերը, Սբ. գրական ուսման և առաքելութեան (միսիոնարութեան) տեսակետէն, ամլութեան շրջան մը պէտք է համարել, քանզի կղերը, որ եկեղեցին կը ներկայացնէր, չգրադեցաւ երբեք՝ նոր Կտակարանի մէկնաբանութեամբ և ո՛չ ալ քարոզութեամբ: Վանականները *ընդօրինակութեամբ* միայն պարապեցան, գեղեցիկ և գունագեղ գրչագրութեան տալով առաւել կարեւորութիւն:

Թաթարները երբ ներխուժեցին Կարին, կողոպտեցին *«աստուածային գրեանքը»* և ծախեցին չնչին գիներով, իսկ մնացածը գործածեցին իբրև վառելանիւթ--կը հաստատէ **Կիրակոս Գանձակեցին**: Յիշատակութիւն ալ կայ, որ մեծ քանակութեամբ ձայ ձեռագրեր Միջին Ասիա տարած է Լէնկոյիմուր:

Ինչո՞ւ մեր հայրենի վանքերու վանականները իրարու հետ կը մրցէին թէ ո՞վ աւելի գեղեցիկ Աւետարան կրնայ գրել, փոխանակ հազարաւոր *«աստուածային գրեանք»* ընդօրինակելու վանքերու մէջ, թող շրջէին հրապարակներու և ջուկաներու մէջ ու քարոզէին աստուածայայտնիք իրենց Տէրը Յիսուս Բրիստոսը: Պօղոս առաքելի **«Ինձի համար կեանքը Բրիստոս է»** խօսքերը արդեօք մեր ճգնող վանականները չէի՞ն կարդացած, իսկ եթէ չէին կարդացած ի՞նչ գործ ունէին վանքերու և եկեղեցիներու մէջ: Ի՞նչ էր իրենց կոչումը, ձրիակերութի՞ւն, թէ ժողովուրդը դաստիարակել և Յիսուսի սերն ու հաւատքը տարածել: Այդ վանականները եթէ ուսմամբ ու քարոզութեամբ գրադէին ու ժողովուրդը Յիսուսի աշակերտ դարձնէին, շատ հաւանական է, որ իրենց ընդօրինակած Աւետարանները փոխանակ այրուելու պիտի կարդացուէր ձայ հաւատացեալներու կողմէ:

Արդեօք այսօր, ձայ և համաշխարհի կղերականները ի՞նչ կ'ընեն, կ'ուսուցանե՞ն Յիսուսի Աւետարանը: Կ'իմաստաւորե՞ն անոր Ճշմարտութիւնները, յարութիւն կու տա՞ն հոգիով մեռած անուանական հաւատացեալներուն: Աստուած Ի՞նք արթնցնէ իր մշակները և անո՞նք հաւատարիմ ու բարի աշակերտները դառնան Յիսուս Բրիստոսի:

«Ինձի համար կեանքը Բրիստոս է» ըսելը, կը նշանակէ մեր Տիրոջ պակաս ձգած գործը մե՛նք պիտի շարունակենք: Պօղոս առաքել կը գրէ Կողոսացւոյ եկեղեցիին ըսելով.

**«Իմ մարմնիս մէջ Բրիստոսի կրած նեղութիւններուն
գակասը կը լրացնեմ Իր մարմնին համար»**

--Կողոս. Ա.24:

Յիսուսի առաքելութիւնը, *համաշխարհային*՝ պատուիրակութիւն մըն էր: Յիսուս այդ առաքելութեան Իրեն ինկած մասը (Աստուծոյ Ճշմարտութիւնը, Մէրը, ողորմութիւնն ու շնորհը) յայտնացուցուց աշխարհի, Իր ապրումով, խոնարհութեամբ, ծառայութեամբ և նահատակութեամբ: Ան ընտրեց աշա-

կերտներ, որոնց շնորհեց սոյն հրաշագեղ տեսիլքը կատարելու շնորհը և ձոգին: Իր սրբարար խաչելութեամբ ու յաղթակա՛ն յարութեամբ պատուիրեց աշակերտներուն և ըսաւ.

**«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենամ, սակայն
բաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհին»--Յով. ԺԶ.33:**

Յետոյ զանոնք աւելի եւս բաջալերելու համար տուաւ անոնց աշակերտութեան տեսիլք շնորհը ըսելով.

«Ինծի տրուած է ամէն իշխանութիւն երկնքի մէջ և երկրի վրայ. ինչպէս Հայրը դրկեց զիս, **եւ ալ ձեզ կը դրկեմ:** Յիսուս, Իր աշակերտները ճգնաւորութեան չդրկեց, այլ քարոզելու: Ի՞նչ պիտի ըլլար արդեօք Հայաստան աշխարհի հաւատքը, եթէ Թադէոս և Բարթոլոմէոս առաքեալներ փոխանակ Հայաստան գալու և Յիսուս Փրկիչը քարոզելու, ճգնէին անապատի մը քարայրին մէջ: Պատասխանը ընթերցողին կը թողում:

Գացէ՛ք ուրեմն, **աշակե՛րս** դարձուցէք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք զանոնք Հօր և Որդիին և Սուրբ Հոգիին անունով: **Սորվեցուցէ՛ք** անոնց պահել այն ամէնը, ինչ որ պատուիրեցի ձեզի. եւ ահաւասիկ ես **ձեզի հետ եմ** բոլոր օրերը՝ մինչեւ աշխարհի վախճանը»:

Յիսուսի վերջին պատուէր Հաւատոյ Հանգանակը. կ'ըսէ Յիսուս.

**«Եթէ դուք զիրար սիրէ՛ք՝ առո՛վ ամէնքը պիտի
զիտնան թէ դուք Իմ աշակերտներս էք»--Յով. ԺԳ.35:**

Փետրուար 4, 2002
Թորոնթօ

Յ Ա Ջ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

SUCCESS

Ազգերու պատմութիւնը որո՞նց կը վերագրէ յաջողութիւնն ու փառքը: Անցեալ և ներկայ գրականութիւնը (օրաթերթերն ու հանդէսները) որո՞նք կը պանծացնեն ու կը հրապարակեն որպէս յաջող ու համբաւաւոր անձնաւորութիւններ: Հարուստները՝ թէ աղֆատները, հերոսները՝ թէ տկարները: Մարդիկ, որո՞նց կը ծափահարեն որպէս գնահատանք, կանգնած կրփամարտի՞կը, թէ գետին փռուած կիսամեռ գետնափարջը:

Հովերոսի "Իլիական"ի հերոսներէն, Տրոյական պատերազմի մասնակցողներու քաջագոյնը՝ Աքիլլէս, որդին Պելէս արքայի և Թետիս աստուածուհւոյն, հին յոյն դիցաբանութեան ամենայաջող դիւցազն էր, որ քաջկրտեց ձեթթորի մարմինը կապելով գայն իր կառփին:

Մեծն Աղեֆասնդրի արջաւանքները մեծ յաջողութեամբ տարածուեցան Մակեթոնիայէ մինչեւ Հնդկաստան, սակայն ան օտար երկնքի մռայլ աստղերուն տակ իր կայծակնավառ աչքերը փակեց հօրէնական դամբարանէն հազարաւոր մղոններ հեռու: Ամէն հարստութիւն, ամէն փառք և ամէն յառաջդիմութիւն անպայման յաջողութիւն չի՛ կրնար սեպուիլ:

Ամերիկեան պետութիւնը յաջողեցաւ հիւլէական ուժք հնարել: Այսօր այդ ի՛ր աշխարհաստան ստեղծագործութիւնը կախուած է իր գլխուն վերեւ, որպէս Թոմոկլեան սուր: Ի՛ր հնարած մահաբար գէնքը (յաջողութիւնը) այսօր դարձած է իր իսկ բնաջնջումի սպանալիքը օտարներու ձեռքին մէջ: Ամենայառաջադէմ Ամերիկա գիտութեան հրաշքը վերածեց դժոխային մահատեսիլի:

Եկեղեցւոյ մէջ "յաջողութիւն" բառը երբեք յիշուած չէ սկզբնական դարերուն: "Յաջողութիւն" բառին փոխարէն, առաքելական ժամանակաշրջանին, կը գործածուէր ոսկեֆանդակ բառեր՝

հաւատարմութիւն, սրբութիւն և անձնանուիրում:

Անձնագոհ ու գիտակից Քրիստոնէաներու թիրախ նպատակակէտը յաջողութիւն եղած չէ, այլ՝ թափանցել աստուածային տեսիլքներու և խորհուրդներու:

Այժմ ազգերը և ժողովուրդները հարուստ են, և հետզհետէ աւելի կը հարստանան ստացուածքով, դրամով և ջուայտութեամբ, բայց կողոպտուած ու դատարկուած են հոգեւորապէս, վարքով, կենցաղով ու սուրբ ապրումով: Հայ պատմութիւնը դիւցազուններով աղֆատ է, իսկ սուրբերով հարուստ: Առանձնութիւնը՝ *հոգիաց* հարուստներու համար պարգեւ մը եղած է, իսկ *նիւթակալաց* հարուստներու համար՝ արգելափակում: Բարեկեցիկ և հարուստ կեանքը, որքան հարուստ դառնայ, այնքան աւելի կը հեռանայ մշակոյթէն:

Յիսուս Զրիստոս հարստանալը չէ՛ որ կ'արգիլէ, ոչ ալ տնտեսագիտութիւնը, հապա լոկ կը զգուշացնէ մեզ *անոր ծառայ ըլլալէ*: Մամոնայի ծառայել կ'ենթադրէ նիւթապաշտ ըլլալ: Հոռմի եռապետներէն Կրասիոսի անունը դրամասիրութեան հոմանիշ եղած էր: Արդարութիւնն ու ուղղամտութիւնը նման են թթուածինի, որքան բարձրանաս (հարստանաս) այնքան կը նուազի ան:

«Անոնք որ կ'ուզեն հարստանալ՝ կ'իյնան փորձութեան, որոգայթի և ջատ մը անմիտ ու վնասակար ցանկութիւններու մէջ»—Պօղոս տառեալ Ա. Տիմ. 2.9:

Հին Հոռմ կեդրոնն էր աշխարհի հարստութեան, բայց և այնպէս զեխութեան, մտքի և կեանքի այլատրման: Հարստութեան մէջ կը չքանան յաճախ ընտանիքի, ազգի և Աստուծոյ սէրը: Աշխարհիս անսիրտ մեծութեան, անմիտ հարստութեան և աննպատակ յաջողութեան սահմանը գերեզմանն է: Միասնականութեան բացակայութեան պատճառով, մենք՝ Հայերս կորսնցուցինք մեր հնագոյն դարաջրջաններու փառաշուք հարստութիւնները:

Ուրիշներ յաջողութիւն կը փնտռեն անսանձ փառասիրութեան մէջ: Անհաւատը կոյր մեքենայ մըն է, որուն ողորմելի զսպանակներն են՝ *դրամ, հաճոյթ և փառասիրութիւն*: Յաճախ բարեսիրութիւնը կը կատարուի ի ցոյց մարդկան աւելի մեծ ջանքերու ակնկալութեամբ՝ փառասիրութեան և ուրիշ ծածկուած եսական նպատակներու համար: Միաբանութիւնը սիրոյ, իսկ պառակտումը անձնասիրութեան և փառասիրութեան արդիւնք է: Նախանձ, փառասիրութիւն, եսամոլութիւն և հպարտութիւն՝ մարդը վայրագ գազան կը դարձնեն:

Մահաբոյր դագաղին մէջ ամէն մեծութիւն և փառք կը մարին ու կը լռեն: Իսկ սրտի գոհունակունիւնն ու երանութիւնը այն բարձունքներն են, ուր բառերն ու խօսքերը կը դադրին և մարդ հոգեկան յափշտակութեան մէջ կը տեսնէ զԱստուած ու կը ծանջնայ ինքզինքը:

Ուրեմն ի՞նչ է յաջողութիւնը որ խուսափած ու պրծած է բազմահազար հարուստներու և զայն հետազօտող ու փնտրող երկրի հզօր բռնատէրերու իրաւասութենէն ու լիազօրութենէն:

Յաջողութիւնը այն հոգեկան երանելի վիճակն է, գերագոյն երջանկութիւնն ու կատարեալ բարօրութեան կացութիւնն է, որ մարդ կրնայ հասնիլ ո՛չ թէ բան մը *ստանալու* կամ առնելով, այլ *բաժնեկող, զոհաբերուելով ու սիրելով*: Յիսուսի աջակերտները ձգած էին ամէն ինչ հետեւելու համար Յիսուս մարգարեին, որ չէր խոստանար ոչ դրամ և ոչ հող, և կը խօսէր միայն սիրոյ, աղքատութեան և ծառայութեան մասին, որ կը տանի կատարելութեան:

Առաքեալները՝ բոլոր իմաստասէրներէ, մտաւորականներէ և իշխանաւորներէ աւելի փոքր էին, իսկ այսօր...համաշխարհային դէմքեր ու նկարա-

գիրներ դարձած են: Աշակերտները ճանչցան իրենց Վարդապետը մի միայն Անոր ծառայութեան, խաչելութեան ու Յարութեան ընդմէջէն:

Ոմանք կրնան առարկել և ուրիշներ ծաղրել վերոյիշեալ բանալին որպէս յաջողութեան միջոց: Սակայն ծառայութիւնն ու նուիրումն է երջանկութեան և սրտի գոհունակութեան գաղտնիքներէն մին: Կարելի չէ՛ երեւակայել մայր մը, որ ծառայած է իր ընտանիքին ու երջանիկ չէ զգացած ինքզինք: Յաջող ամուսնութեան և օրինակելի ընտանիքի մը գաղտնիքը նմանապէս *ցոյնացարձ* սէր, գոհողութիւն և նուիրում է, որովհետեւ ամուսնութիւնը խոստում մըն է ուրախացնելու և երջանկացնելու և պատրաստակամութիւն մը գոհաբերուելու:

Վարդապետաց Վարդապետը պատգամած է ըսելով.

«Երանելի՛ է մանաւանդ տալը քան առնելը»--Առաք. Ի.35:

Բնագրին մէջի "երանելի" բառը իր մէջ կը կրէ նաեւ "երջանկութիւն": Ծատ ջատեր յաջողութիւնն ու երջանկութիւնը փնտրած են ուժի, զօրութեան և անվերջ յաղթանակներու շոյլութեան մէջ: Երջանկութիւնը մենաջնորհը չէ՛ ունեւորին, ո՛չ ալ ջնորհ մըն է աղֆատին, տկարին կամ տգէտին: Յաջողութիւնն ու երանութիւնը *հոգիին ժպտու և խայտաւն՛ն* է. որ կը բխի ծառայութեան, անձնագոհութեան և սիրոյ Ակնադիւրէն և առարկայականօրէն

կը տեսնուի Յիսուս Քրիստոսի օտրումին մէջ:

Յուլիս 8, 1995

Թորոնթօ

Ձ Ն Ո Ր Հ

--Եփես. Բ.6

--Բ. Կորնթ. Ե.17

1. Աստուածային ծնորհը ոյժ գերազանց և գերիվեր է, քան ինչ որ կայ:
ա. Մեր գոյութիւնը կը պարտինք աստուածային *Մէք ջնորհին*
բ. **“Տէք”** անունը կու տանք Աստուծոյ մեզ *սիրած* ըլլալուն համար իսկ **“Աստուած”** անունը՝ մեզ *ստեղծած* ըլլալուն համար:
2. Ի՞նչ է **ՇՆՈՐՀԸ**:
ա. Ծինարարութիւնը մարդ արարածի՛ն կը վերաբերի: Իրէ և նիւթէ քան մը կը շինէ:
1. Բոյսի մը արմատը անկենդան նիւթերը լուծելով ծաղիկներ և պտուղներ կ'արտադրէ:
բ. Ստեղծել՝ Աստուծոյ *յատկութիւնն* է: Հնարել ոչինչէ գոյութիւն տալ է:
գ. Մարդկային միտքը կը ստեղծէ: Ա. Մտարոյ այբուքներ հնարեց:
1. միտքը՝ աստուածային *ջնորհ* մըն է ինքնին:
դ. Ստեղծագործել՝ գեղարուեստօրէն պատկերացնել է մտքի իրականութիւնը:
ե. Բանաստեղծը խօսքի միջոցով գեղարուեստօրէն միտքը կ'արտայայտէ:
3. Ծնորհը, անկարելին՝ կարելի ընելն է...: Օրինակ.-
ա. Գեղեցիկ, չքնաղ, սիրուն, և հրապուրիչ մէկու մը, ըլլայ կին թէ այր կրնաս հանդիպիլ և սիրահարուիլ:
1. Չայն *սիրելը* շնորհ մը չէ, այլ *բնական* իրողութիւն է:
2. Այդ գեղեցիկ ու սիրուն անձին *Բե՛զ սիրելը* շնորհ մը կը նկատուի, ո՛չ թէ Բո՛ւ *գինճը սիրե՛լը*:
3. Մէկու մը տասնոց մը կու տաս որ փոխէ, տասը հատ մէկնոց տալով, այդ *ջնորհ մը չէ՛*: *Հարիւր հատ մէկնոց տա՛լը՝* ա՛յդ շնորհ մըն է...:
4. Բարեկամ մը Բեզ արքայական խնճոյքի կը հրաւիրէ:
ա. Խրախճանքը Բեզի համար *ձրի կը սեպուի*, սակայն այդ կերուխումը ձրի չէ, որովհետեւ անոր *գինը վճարուած* էր բարեկամիդ կողմէ:
բ. Որեւէ բարեկամութիւն, մտերմութիւն և սրտակցութիւն եթէ Բեզի չ'արծէ, այդ բարեկամութիւնը արծեք մը չի՛ ներկայացներ:
5. **«Աստուած մեզ կենդանացուց Քրիստոսով: Եւս՛ շնորհով փրկուեցաք»:**
ա. Ի՞նչպէս շնորհով փրկուած կրնանք ըլլալ:
բ. Աստուած մարդ արարածը անմահ չէր ստեղծած, այլ անոր *յախտնեակքն*

կեանք շնորհեց Իր Միածին Որդւոյն Քրիստոսի՝ հաւատալով:

6. Փրկագործութիւնը Աստուծոյ *գերագոյն ջնորհն*, է մարդ արարածին:
 - ա. «Ոնեւ մէկը որ Քրիստոսի միացած է՝ (Քրիստոսի մէջ է) *նոր արարած է*
 - բ. Ճնորհի, քրիստոնէական հասկացողութիւնը, Աստուծոյ անգերազանցելի, *ինքնամատոյց և ձրի սէրն է*, որ կը մատուցուի մեղանշական մարդ արարածին:
 - գ. Աստուծոյ ներում շնորհող սէրը կը յաղթէ մարդ արարածին բոլոր մեղանշումները:
 - դ. Երբ թշուառ մարմինս փճանայ ծորի, թո՛ղ իմ մօտս պահուի շնորհիդ օծումը: Ի՞նչ կը նշանակէ:
 - ե. Յարութեան երաշխիքը՝ Ա. Խաչեցեալին արիւնով *կնե՞րա ատ* գրաւականն է:

7. Այս շնորհի մատուցումն է, որ կը զանազանէ քրիստոնէութիւնը տարբեր կրօններէ:
 - ա. Հին Կ-ին մէջ "շնորհ" բառը գործածուած է որպէս "բարեհաճութիւն"
 - բ. Նոր Կ-ին մէջ ան գործածուած է որպէս *ներում և թողութիւն* մեղքի:

8. Աստուածային ստեղծագործ Մերը, ինչպէս որ խոնարհեցաւ (իջաւ) աշխարհ պարգեւելու սիրոյ և իմացական կեանք մարդ արարածին, մարդ՝ ի՛նք եւս *բարձրանայու* է դէպի տիեզերական Մեր և Կեանք ուր պիտի գտնէ իր Արարիչը և Տէրը:
 - ա. Դէպի Աստուած բարձրանալը՝ "Նոր արարած" ըլլալ կը նշանակէ:

9. Միտքը գերագոյն և գեղեցկագոյն պարգեւներէն մէկը՝ Աստուծմէ շնորհուած է մարդ արարածին:
 - ա. Հաւատացեալը կը դիմէ ուղղակի Աստուծոյ:
 - բ. Միայն Աստուծմէ՛ կարելի է շնորհի սպասել:
 - գ. Պօղոս առաքեալ փոխանակ սեմական "ջալոմ" «Խաղաղութիւն» ողջունի, իր նամակներուն մէջ կը գրէ "ՃՆՈՐՀՔ և ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ» բառերը: Ան "շնորհ" բառը գործածած է 101 անգամներ:

10. *Հաւատաց ու սիրեց* այն զոյգ ճառագայթարձակ շնորհներն են, որոնք կը սրբացնեն մարդը և տեսանելի կը դարձնեն *Անտեսանելին՝ գԱստուած*:

Հոկտեմբեր 5, 1995
Թորոնթօ